***Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:***

***4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.***

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝* ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

**IV**

**(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)**

*Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը*

# Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից վերջինիս և <<Ագաստ>> ՍՊԸ-ի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ <<ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5>> ծածկագրով պայմանագրի թիվ 345 միակողմանի մասնակի լուծելն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել ամբողջությամբ.

***1.1. անվավեր ճանաչել <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի կողմից 08.08.2024թ.-ին կայացված թիվ 345 պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին ծանուցումը:***

***2. <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<Ագաստ>> ՍՊԸ-ի բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:***

***3. <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<Ագաստ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության գումարը:***

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*